Արձանագրություն N 2

«ՀՀԷՆ-ԳՀԾՁԲ-25/52» ծածկագրով հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան 17 հուլիսի 2025թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ Կ.Տեր-Հակոբյան

Հանձնաժողովի անդամներ

Ա. Բալայան

Լ.Բզնունի

Ռ.Կիզողյան

Ա.Քարամյան

Գնումները համակարգող քարտուղար՝ Դ. Միերյան

1. **«ՀՀԷՆ-ԳՀԾՁԲ-25/52»** ծածկագրով ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ), 2025թ-ի հուլիսի 17-ին, ժամը 10:00-ին:

2. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի անվանումը	Տվյալները
1	«ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ	ք. Երևան, Արաբկիր, Ա.Հեքիմյան փողոց 1 տուն հեռ. +374 010 200-265, +374 95 579-573, +374 99 773-333, +374 99 199-961
2	«Ռեդ Մարշալ» ՍՊԸ-ն	Արարատ, Նոր Կյուրին 9փ, 13 հեռ. +374 93 240-234
3	«ՍԵՔՅՈՒՐԻԹԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ք.Երևան, Խանջյան 13/3 հեռ. +374 060 705 507

3. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

4. Հանձնաժողովը արձանագրեց, որ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:

Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 հասցեով, 809 աշխատասենյակում:

«ՀՀԷՆ-ԳՀԾՁԲ-25/52» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

ք. Երևան

01 օգոստոս 2025թ.
Ժամը՝ 16:00

5. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

ՀՀ դրամ

չափաբաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Գնման առարկայի նախահաշվային գինը	Մասնակցի անվանումը և առաջարկված ընդհանուր գինը *					
					«ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ		«Ռեդ Մարշալ» ՍՊԸ-ն		«ՍԵՔՅՈՒՐԻԹԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	
					Գնի առաջարկը		Գնի առաջարկը		Գնի առաջարկը	
					առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ
1	ՀՀ էկոնոմիկայի նախարարության Ա և Բ մասնաշենքի թվով 3 պահակակետի հանրային անվտանգության պաշտպանության /պահնորդական/ ծառայություններ	դրամ	1	45 000 000	34000000	40800000	26 897 000	32 276 400	36991612,5	44389935

(*-եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում,ապա լրացվում է միայն "Առանց ԱԱՀ" սյունակը)

6. Հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

1. Ար-Մոբիլ» ՓԲԸ

- Ար-Մոբիլ» ՓԲԸ-ի կողմից տրամադրած փաթեթում առկա չէ մասնավոր պահնորդական գործունեության իրականացման վերաբերյալ ոստիկանության կողմից տրամադրված լիցենզիան:

- Օրենքով սահմանված կարգով որոկավորված պահնորդներն առնվազն յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ անցնում են պարտադիր վերապատրաստում: «Ար-Մոբիլ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.3-ում նշված ցանկով ներկայացված պահնորդներից՝ Սահակյան Գևորգի, Պետրոսյան Նարեկի, Մելքոնյան Մինասի, Մարտիրոսյան Սևակի, Գևորգյան Ռաֆֆիի և Բաղդասարյան Խորենի վերապատրսատման վկայականների ժամկետը սպառված է:

2. «ՍԵՔՅՈՒՐԻԹԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

- «Սեքյուրիթի գրուպ» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.3-ով նշված ցանկով ներկայացված պահնորդներից՝ Ավետիսյան Լիլյաի, Եսայան Արթուրի, Ենգիբարյան Արմանի, Օրուջյան Էդուարդի, Գաբրիելյան Ռոբերտի համար անհրաժեշտ է ներկայացնել վերապատրաստման վկայականներ քանի որ, պահնորդի որակավորման ստուգման վկայականի տրամադրումից

անցել է երեք տարի, իսկ Թովմասյան Խաչիկի պահնորդական որակավորման վկայականը բացակայում է:

- «Սեքյուրիթի գրուպ» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.3-ով նշված ցանկով ներկայացված պահնորդներից՝ Արման Սահակյանի և Ներսես Փիրումյանի տարիքային շեմը գերազանցում է հրավերով սահմանված պահանջը (մինչև 50 տարեկան):

3. «Ռեդ Մարշալ» ՍՊԸ

- «Ռեդ Մարշալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաթեթում բացակայում է Հավելված 1.3.1-ով սահմանված պարտավորագրերը: Բացակայում է նաև Հավելված 1.3-ով նշված պահնորդների անձը հաստատող և պահնորդների որակավորումը հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև Հավելված 1.3-ով նախատեսված՝ «մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին»

Հանձնաժողովը նաև արձանագրեց. հաշվի առնելով, որ հրավերի տեխնիկական բնութագրում սահմանված է, որ ծառայությունը մատուցելիս պահնորդները պետք է կրեն հրազեն զենք/ ատրճանակ, ըստ այդմ՝ օրենքով սահմանված կարգով, հրավերի հավելված 1.3-ում նշված ցանկով պահնորդները (ինչպես նա այդ պահնորդների գործատու ընկերությունը) պետք է ունենան ՀՀ ՆԳՆ-ի կողմից տրված հրազեն զենք / ատրճանակ կրելու իրավունքը հավաստող փաստատթուղթ: Նշվածով պայմանավորված Ար-Մոբիլ» ՓԲԸ-ին, «ՍԵՔՅՈՒՐԻԹԻ ԳՐՈՒՊ», և «Ռեդ Մարշալ» ՍՊԸ-ներին խնդրում ենք շտկման ենթակա փաստաթղթերի հետ միաժամանակ ներկայացնել նաև հրազեն զենք/ատրճանակ կրելու իրավունքը հավաստող փաստատթերը:

Վերը թվարկված անհամապատասխանություններով պայմանավորված հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

«ՀՀԷՆ-ԳՀԾՁԲ-25/52» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

ք. Երևան

07 օգոստոս 2025թ.
Ժամը՝ 12:30

Սահմանված ժամկետում բոլոր երեք մասնակիցները ներկայացրել են շտկման ենթակա փաստաթղթերը: Ներկայացված փաստթղթերը էլ. փոստով ներկայացվել է հանձնաժողովի անդամներին՝ գնահատման նպատակով ս. թ օգոստոսի 5-ին:

Հանձնաժողովի անդամների կողմից շտկումների վերաբերյալ եզրակացություն ներկայացված չէ: Փոխարենը, հանձնաժողովի կողմից ներկայացվել է ստորև ներկայացված առաջարկությունը.

Հանձնաժողովը գնահատման աշխատանքներն իրականացնելու նպատակով արձանագրեց հետևյալը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 67-րդ կետի կարգավորումը, ՀՀԷՆ-ԳՀԾՁԲ-25/52 ծածկագրով գնման գործընթացի գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով գնման գործընթացի մասնակիցների կողմից ներկայացրած հայտով պահանջված փաստաթղթերի շտկված փաթեթները, անհրաժեշտ է համարում հարցումներ ուղարկել շահագրգիռ մարմիններ՝ պարզելու համար մասնակիցների փոխկապակցված անձ լինելու հանգամանք առկա է թե ոչ, ինչպես նաև ՆԳՆ-ից ստանալ պարզաբանում՝ մասնակիցների որպես իրավաբանական անձ զենքի պահելու և օգտագործման տրամադրելու թույլտվության օրինականությունը և մասնակիցների կողմից ցանկերով ներկայացրած պահնորդների վերապատրաստման վկայականի վավերականությունը:

ՀՀ Ֆինանսների նախարարությունից գրությամբ ստանալ պարզաբանում այն մասին, թե հրավերի հայտով ներկայացված պայմանները և մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի վավերականությունը դիտարկելի են այս փուլում, թե դիտարկվելու է պայմանագրի կատարման փուլում, մասնավորապես՝ զենք կրելու թույլտվության առկայությունը, պահնորդական որակավորման վկայականի անժամկետ տրամադրման դեպքում վերապատրաստման վկայականի վավերականության ժամկետը:

Նշվածով պայմանավորված հանձնաժողովը որոշեց կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը, մինչև շահագրգիռ մարմիններից համապատասխան պարզաբանումներ ներկայացնելը:

Գնահատող հանձնաժողովի նախագահ — Կ.Տեր Հակոբյան ([illegible] 30.07.25թ թիվ 1181-Ա [illegible])

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Բալայան

Լ. Բզնունի

Ռ.Կիզողյան

Ա.Քարամյան

Քարտուղար — Դ.Միհրյան